ԷԼԻՏԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԱՍՅԱՆ Մ. Է.

XIX դ. երկրորդ կեսին, կապված քաղաքական կյանքի կենտրոնացման և բյուրոկրատացման հետ, եկավ ներկայացուցչական կառավարման փորձի և ազատական-ժողովրդավարական արժեքների վերագնահատման շրջանը: Դա իր արտացոլումը գտավ քաղաքագետներ Վիլֆրեդո Պարետոյի՝ էլիտաների տեսությունում և Գաետանո Մոսկայի՝ քաղաքական դասի հայեցակարգում: Սակայն հայտնի ճշմարտությունը, թե ամեն նոր ընդամենը հիմնովին մոռացված հինն է, արդարացի է նաև ժամանակակից էլիտաների տեսության նկատմամբ, քանզի վերջինիս կենտրոնական գաղափարը, թե՝ բոլոր հասարակություններում գոյություն ունի երկու օղակ՝ բարձր, որի մեջ սովորաբար մտնում են կառավարողները, և ցածր, որտեղ գտնվում են կառավարվողները, հարազատ մեկնակետ է եղել անցյալի շատ մտածողների ուսումնասիրությունների համար: Ինքը՝ Վ. Պարետոն՝ էլիտաների տեսության հիմնադիրը, խոստովանում է, որ սկսած Պլատոնից, որը զգացել է նշված խնդիրը, ինչպես նաև այն երևույթը, որ բարձր և ցածր օղակների միջև տեղի է ունենում անհատների շրջապտույտ, շատերն են քննարկել այս երևույթը, և գոյություն ունեն դրան նվիրված գրական մեծաքանակ ստեղծագործություններ[1]:

Չնայած այդքան խոր արմատներին, թերևս միակ փաստարկը, որի մասին միակարծիք են էլիտարիստները, այն է, որ հասարակության համար էլիտաներն անհրաժեշտ են: Ուստի և «էլիտարիստ» եզրը (elite - վերնախավ – Մ. Մ.) երբեմն արհեստականորեն միավորում է բավական բազմազան հեղինակների (այստեղ մենք տեսնում ենք և՛ աջ ծայրահեղականների, և՛ պահպանողականների, և՛ ազատականների, իսկ երբեմն էլ՝ անգամ ձախ արմատականների, ինչպես նաև բարենորոգիչների ու ռևիզիոնիստների): Դա հիմք է տվել նեոէլիտիզմի ակնառու ներկայացուցիչներից մեկին՝ Ջովաննի Սարտորիին, մտահոգություն հայտնել, թե «այսպես կոչված, էլիտարիստները չեն ներկայացնում մի խումբ, որը միասնական և ընդհանրական է», և հայտնի չէ անգամ, թե «ինչպիսի չափանիշ է էլիտարիստներին սահմանում որպես այդպիսին»[2]:

Իսկ ի՞նչ են էլիտարիստները հասկանում «էլիտա» եզրույթի տակ: Ընդհանրապես այն ծագում է լատիներեն eligere և ֆրանսերեն elite՝ լավագույն, ընտրյալ բառից: Սակայն ստուգաբանությունը կարող է ունենալ լոկ օժանդակ

---

[1] **Паррето В.** *Компендиум по общей социологии (Антология политической мысли в 5-ти томах, т. 2, М., 1997, с. 64).*

[2] **Сартори Д. Ж.** *Пересматривая теорию демократии (Антология политической мысли в 5-ти томах, т. 2, М., 1997, с. 723).*

նշանակություն այնպիսի հասկացության սահմանման դեպքում, որը, ըստ երևույթին, որոշակի սոցիալական հայեցակարգի հանգուցակետ է:

Մինչդեռ եթե փորձում ենք հիշյալ հարցի պատասխանը գտնել էլիտարիստների աշխատություններում, ապա ոչ միայն չենք տեսնում համակարծություն, այլև՝ հակառակը, հանդիպում ենք մի շարք դատողությունների, որոնք երբեմն հերքում են մեկը մյուսին: Այդուհանդերձ, եթե գումարենք այն հիմնական նշանակությունները, որոնցով այդ եզրույթն օգտագործվում է, ապա կստացվի հետևյալ պատկերը. էլիտա են անվանվում անձինք, որոնք՝ 1. իրենց գործունեության ոլորտում ստացել են առավելագույն գործակիցը, 2. քաղաքական առումով առավել ակտիվ մարդիկ են, որոնք կողմնորոշված են դեպի իշխանությունը՝ հասարակության կազմակերպված փոքրամասնությունը, 3. հասարակությունում օժտված են բարձր դիրքով և դրա շնորհիվ ազդում են սոցիալական գործընթացների վրա, 4. հասարակությունում ունեն առավելագույն հեղինակություն, կարգավիճակ, հարստություն, 5. զանգվածների նկատմամբ մտավոր կամ բարոյական առավելությամբ են օժտված՝ անկախ իրենց կարգավիճակից, 6. ունեն առավելագույն պատասխանատվության զգացում, 7. իշխանության դիրքերով են օժտված, 8. սոցիալական կյանքը որոշող կազմակերպություններում և ինստիտուտներում ունեն ձևական իշխանություն, 9. հասարակությունում կազմում են առավել կարևոր գործառույթներն իրականացնող, առավելագույն իշխանությունն ու ազդեցությունն ունեցող փոքրամասնությունը, 10. «աստվածաներշնչված» անհատներ են և արձագանքել են «բարձրագույն կոչին», լսել են «կանչը» և իրենց մեջ զգացել են առաջնորդի ընդունակությունը (Լ. Ֆրոյդ), 11. խարիզմատիկ անհատներ են, 12. կազմում են հասարակության ստեղծարար փոքրամասնությունը, որը հակադրվում է չստեղծագործող մեծամասնությանը, 13. համեմատաբար ոչ մեծ խմբեր են՝ կազմված հասարակության քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում առաջատար դիրք զբաղեցնող անձանցից, 14. առավել որակյալ մասնագետներ են, նախ և առաջ՝ գիտական և տեխնիկական մտավորականներ, մենեջերներ և բյուրոկրատական կառավարման համակարգում՝ բարձրագույն ծառայողներ, 15. կազմում են ղեկավար շերտը՝ ցանկացած սոցիալական խմբում՝ պրոֆեսիոնալ, էթնիկ, տեղային (օրինակ՝ գավառական քաղաքի էլիտա), 16. որոշակի սոցիալական խմբի լավագույն, առավել որակյալ ներկայացուցիչներն են (օդաչուների, շախմատիստների, անգամ գողերի էլիտա - Լ. Բոդեն)[3]: Ամեն դեպքում էլիտա-զանգվածներ երկձյուղավորումը առաջատար մեթոդաբանական սկզբունք է սոցիալական կառուցվածքի վերլուծության ժամանակ: Լայն շրջանառություն է ստացել նաև «ենթաէլիտա» եզրը, որի կողմնակիցները

---

[3] **Reading H. A.** *Dictionary of The Social Sciences, L., 1978, p. 74;* **Safire W.** *Political Dictionary, N . Y., 1978, p. 200.*

պաշտպանում են հասարակության բուրգային մոդելը[4]: Ակտիվորեն օգտագործվում է նաև «կոնտրէլիտա» եզրը՝ «սոցիալական ստորախավի» առաջնորդներին՝ ձախակողմյան կուսակցությունների, արհմիությունների և այլնի ղեկավարներին մատնանշելու համար:

Հետաքրքիր է իտալացի էլիտարիստ Ջ. Սարտորիի՝ «էլիտա» հասկացության մանրակրկիտ վերլուծությունը: «Վերահսկող փոքրամասնության առանձնացման համար չափանիշները բազմաթիվ են: - գրում է նա, - Դրանցից երկուսն առաջնակարգ կարևորության են: Առաջին չափանիշն ալտիմետրիկ է (դա նրա եզրութաբանությունում գործառութայինն է – Մ. Մ.), վերահսկող խումբը այդպիսին է, քանզի հասարակության կառուցվածքի ուղղահայաց կտրվածքում գտնվում է «վերևում»: Համապատասխանաբար, կարող ենք ասել, որ ցանկացած հասարակությունում իշխանությունը գտնվում է իշխող բարձր դասի ձեռքում... Ալտիմետրիկ չափանիշը հանգեցնում է իրերի փաստացի դրության արդարացմանը. ով վերևում է, նա վերևում է, իսկ ով այնտեղ է գտնվում, նա էլ «հզոր» է, նա օժտված է իշխանությամբ ու իշխում է: Բայց... հին ռեժիմը տապալվեց հենց հանուն այն արժեքային չափանիշի, որի համաձայն՝ հասարակության ուղղահայաց կառուցվածքը (fabric) պիտի վստահվի ամենաարժանիների (այդպիսին ճանաչվածների) տնօրինությանը: Համաձայն այդ առավել շահեկան տեսակետի՝ որևէ մեկը ոչ թե նրա համար է հայտնվում վերևում, որ օժտված է իշխանությամբ, այլ հենց հակառակը, անձն օժտված է իշխանությամբ և գտնվում է վերևում, քանզի արժանի է դրան: Այսպիսով, մյուս չափանիշն արժանիքի չափանիշն է (a merit criterion)»[5]:

Ինչպե՞ս են այդ երկու չափանիշները թարգմանվում ժամանակակից եզրութաբանության լեզվում, և ինչպե՞ս են դրանք նրանով արտահայտվում, հարցադրում է Սարտորին և նշում, որ՝ քանզի վերջին հաշվով հաղթանակեց Պարետոյի էլիտա եզրույթը, «կարևոր է հասկանալ՝ ինչու Պարետոն ընդունեց այդ եզրը, և ինչպես էր նա այն պատկերացնում»[6]: Պարետոյի «Համընդհանուր սոցիոլոգիայի տրակտատ»-ում հստակ սահմանված է, որ «էլիտա» գնահատանքը վերաբերում է իրենց գործունեության ոլորտում «ձեռնհասության» (“capacity”) բարձր մակարդակի մարդկանց ... Բայց այդ հասկացության լրիվ սահմանմանը Պարետոն առավել մոտեցել է իր ավելի վաղ աշխատությունում ... «Այդ դասերը [«մարդիկ, որոնք բարձր դիրք են գրավում՝ համապատասխան իրենց ազդեցության և քաղաքական ու սոցիալական հզորության աստիճանի, և / կամ «այսպես կոչված, բարձրագույն դասերը»] կազմում են էլիտան, «արիստոկրատիան» (բառի ստուգաբանական նշանակությամբ՝ aristos = լավագույն – Մ. Մ.): Մինչ պահպանվում է կայուն սոցիալական հավասարակշռությունը, նրանց մեծամասնությունը, որը դրա մեջ է մտնում,

---

[4] **Ippolite D., Walker T., Kolson K.** *Public Opinion and Responsible Democracy, New Jersey, 1976, p. 122.*

[5] **Сартори Дж.** *Вертикальная демократия (Полис, 1993, N 2, с. 388).*

[6] *Նույն տեղում, էջ 714-717:*

ինչպես երևում է, արտաքսվոր չափով տիրապետում է որոշակի որակների (կարևոր չէ՝ լավ, թե վատ), որոնք ապահովում են իշխանությունը»[7]...:

Կան նաև էլիտարիստներ (Ֆ. Նիցշե, Խ. Օրտեգաի-Գասսետ, Ն. Բերդյաև, Տ. Ադորնո), որոնք, ի հակադրություն էլիտաների՝ իբրև իշխանության մոտ գտնվող խմբի մասին մեկնաբանության (դա նրանց պատկերացմամբ՝ սովորաբար «կեղծ էլիտան» է կամ «գռեհիկ էլիտան»՝ ոչ ինքնուրույն, զանգվածների կարիքը զգացող, ուստի և զանգվածային ազդեցությանը ենթարկված), էլիտան համարում են ինքնին արժեք՝ անկախ նրա իշխանական դիրքերից: Ավելին, նրանց համոզմամբ, իսկական հոգևոր էլիտան ձգտում է անջատվել զանգվածներից, մեկուսանալ, հեռանալ դեպի, այսպես ասած, յուրատեսակ փղոսկրե ամրոց, որպեսզի պահպանի իր արժեքները «զանգվածայնացումից»:

Համեմատելով «էլիտա» եզրույթի վերաբերյալ նշված տեսակետները՝ հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ են էլիտարիստները ցանկանում առանձնացնել մարդկանց այդ խումբը՝ այն դարձնելով ուսումնասիրության հատուկ օբյեկտ: Բանն այն է, որ քաղաքագիտության կարևոր խնդիրներից է պատմական գործունեության սուբյեկտի բացահայտումը: Եթե մարքսիզմ-լենինիզմը ելնում էր նրանից, թե «ժողովրդական զանգվածները պատմության իսկական ստեղծագործողներն են»[8], ընդ որում, նշվում էր, որ մինչսոցիալիստական հասարակարգերում շահագործվող դասերի ազդեցությունը պատմության վրա «իրականացվում էր, որպես կանոն, ոչ թե անմիջականորեն և կառավարման մարմնի ներսից, այլ դրսից՝ գերիշխող դասի քաղաքական մեքենայի վրա՝ ճնշման ձևով: Ըստ որում, այդ միջնորդավորված ազդեցությունը, վերջին հաշվով, վճռական էր դառնում, որոշում էր գերիշխող դասի ողջ քաղաքականությունը ... Այդ հակազդման մակարդակը, ժողովրդական զանգվածների դասակարգային պայքարի մակարդակն էլ որոշում է քաղաքական հիմնարկների զարգացումը»[9]:

Նույնիսկ, այսպես կոչված, «խաղաղ» շրջաններում եղել է այդ գործընթացը, ուստի «կառավարման ձևերը, պետական կառուցվածքի ձևերը ոչ թե էլիտայի կամայականության, այլ դասերի անողոք պայքարի արդյունք են»[10]: Ապա էլիտարիստները որպես «միամիտ» են որակում կառավարման մեջ զանգվածների մասնակցության բուրժուական և մանրբուրժուական տեսությունները, որոնք ի հայտ եկան դեռևս այն շրջանում, երբ բուրժուազիան ծագող դասակարգ էր, առաջ էր քաշում հետևյալ դրույթները.

1. Քաղաքական իշխանությունը ցանկացած հասարակությունում իրականացնում է կառավարող էլիտան, որն էլ պատմական գործընթացի «շարժիչ ուժն» է, լուծում է կարևոր սոցիալական խնդիրները, մինչդեռ զանգվածները քաղաքանապես «անտարբեր» են, «պասիվ», այստեղից էլ՝

---

[7] **Паррето В.,** *նշվ. աշխ., էջ 78-79:*

[8] *Տե՛ս* **Ашин Г К.,** *նշվ.աշխ., էջ 4:*

[9] *Նույն տեղում, էջ 8-9:*

[10] *Նույն տեղում, էջ 93-94:*

էլիտայի անխուսափելիությունը ցանկացած հասարակությունում: «Եթե տեսությունում մենք այլ կերպ ենք քննարկում,- գրում է Մոսկան,- դա մասամբ կապված է հնացած սովորության հետ, որին մենք հետևում ենք մտածողության ընթացքում, և մասամբ նշանակության չափազանցման հետ, որը տալիս ենք երկու քաղաքական փաստերի, որոնք թվում են շատ ավելի նշանակալից, քան իրականում կան» (էջ 112-113): Մոսկայի նշած այդ երկու քաղաքական փաստերը հետևյալներն են.

Առաջին՝ *ցանկացած քաղաքական օրգանիզմում կա մեկ անհատ, որը գլխավորն է կառավարող դասի՝ որպես ամբողջի մեջ և գտնվում է իշխանության ղեկի մոտ: Դա միշտ այն մարդը չէ, որն օժտված է օրինական գերագույն իշխանությամբ: Մի դեպքում ժառանգական թագավորի կամ կայսեր հետ վարչապետը կամ ծառայապետն օժտված են իրական իշխանությամբ՝ շատ ավելի մեծ, քան սուվերենի իշխանությունը, այլ դեպքերում ընտրված նախագահի փոխարեն կառավարում է ազդեցիկ քաղաքական գործիչը, որն ապահովում է նախագահի ընտրությունները: Հատուկ պայմաններում մեկի փոխարեն կարող են լինել երկու կամ երեք մարդ, որոնք իրականացնում են գերագույն կառավարչի գործառույթները:*

Երկրորդ՝ *ինչպիսին էլ որ լինի քաղաքական կազմակերպության տիպը, կառավարվող զանգվածների անբավարարվածությամբ, դժգոհությամբ, նրանց զգացմունքներով առաջացած ճնշումը որոշակի ազդեցություն է գործում կառավարող կամ քաղաքական դասի քաղաքականության վրա:*

Մոսկան վստահեցնում է, որ պետության գլուխ կանգնած մարդը որոշակիորեն ի վիճակի չէր լինի կառավարել առանց փոքրաքանակ դասի աջակցության, չէր կարող հարկադրել հարգել իր հրամանները և իրականացնել դրանք, և ենթադրելով, որ նա կարող է հարկադրել կառավարող դասի ներկայացուցիչ մեկ կամ իրոք շատ անձանց գիտակցել իր իշխանության հեղինակությունը, այդ մարդը որոշակիորեն չի կարող գժտվել տվյալ դասի հետ, կամ ընդհանրապես վերջ տալ նրան: «Եթե դա հնարավոր լիներ, ապա նա ստիպված պիտի լիներ իսկույն էլ ստեղծել այլ դաս, առանց որի աջակցության՝ նրա գործունեությունն ամբողջովին կաթվածահար կլիներ: Միևնույն ժամանակ հաստատելով, որ զանգվածների անբավարարվածությունը կարող է բերել կառավարող դասի վիժեցմանը, անխուսափելիորեն պետք է գոյություն ունենա այլ կազմակերպված փոքրամասնություն հենց զանգվածների ներսում՝ կառավարող դասի գործառույթներն իրականացնելու համար: Հակառակ դեպքում ողջ կազմակերպությունը և ողջ սոցիալական կառույցը կքանդվի»[11],- գրում է Մոսկան: Շուտով էլիտալոգիայի, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը՝ Ռոբերտ Միխելսը կձևակերպի «օլիգարխիական միտումների երկաթե օրենքը», ըստ որի, որպեսզի դեմոկրատիան պահպանվի և կայունանա, պետք է ստեղծվի

[11] **Моска Г.** *Правящий класс (Антология политической мысли в 5-ти томах, т. 2, М., 1997, с. 118-119).*

կազմակերպություն, իսկ դա կապված է էլիտայի՝ ակտիվ փոքրամասնության առանձնացման հետ, որին զանգվածները պետք է վստահեն, քանզի չեն կարող իրականացնել իրենց ուղղակի վերահսկողությունն այդ փոքրամասնության նկատմամբ:

Վերոշարադրյալից հետևում է, որ էլիտարիզմն ուղղված է ոչ միայն դեմոկրատիայի (այն առումով, որ ժողովրդի իշխանությունն անիրականանալի է նրանց տեսակետից), այլև հերոսների պաշտամունքի դեմ: Այդ առումով, թվում է՝ հիմնավորված չէ գրականության մեջ արտահայտված այն կարծիքը, թե «առաջնորդության և էլիտայի տեսությունները մոտ են միմյանց»[12]:

2. Կապիտալիստական էլիտան առավել նախընտրելի է, քանզի այն բաց է առավել ընդունակ «ստորին դասի» ծագում ունեցողների համար, զգայուն է զանգվածների հերթական ընտրությունների ժամանակ:

Դեռևս Պարետոն նշում էր, որ «սոցիալական դասերը մեկը մյուսից լրիվ անջատված չեն անգամ այնտեղ, որտեղ գոյություն ունեն կաստաները, և ժանամակակից քաղաքակիրթ ազգերում դրանց միջև կատարվում է ինտենսիվ շրջապտույտ»[13]: Սակայն նա նաև նշում էր, որ «չպետք է շփոթել իրավական դրությունը փաստացի դրության հետ. միայն վերջինս կամ գրեթե միայն այն նշանակություն ունի սոցիալական հավասարակշռության համար: Գոյություն ունեն օրենքի տեսանկյունից փակ կաստաների բազմաթիվ օրինակներ, որոնցում փաստացի կատարվում են այլ սոցիալական դասերից ինտեգրումներ՝ և հաճախ բավական ծավալուն: Մյուս կողմից, ինչո՞ւ են պետք օրենքի տեսակետից բաց կաստաները, եթե իրականում բացակայում են նրանց մեջ մտնել թույլատրող պայմանները»[14]: Այնինչ գաղտնիք չէ, որ ներկայիս կապիտալիստական երկրներում տնտեսության անբաժան տեր ֆինանսական օլիգարխիայի մեջ մտնող մի քանի հարյուր ընտանիքները նաև այդ երկրների քաղաքական ու մշակութային կյանքի ամենակարող կառավարիչներն են (ճիշտ է՝ անմիջական կառավարումը գտնվում է կառավարական պաշտոնյաների ձեռքում, որոնք, բոլորովին պարտադիր չէ, որ մոնոպոլիստական բուրժուազիայի շրջանակից լինեն, այնուամենայնիվ, նրանք կառավարումն անփոփոխ իրականացնում են ի շահ հենց այդ մոնոպոլիստական բուրժուազիայի): Իսկ բուրժուազիայի առանձնահատկությունն այն է, որ ավելի ու ավելի է վերածվում փակ խմբի, որում գործնականում անհնար է «առտսայդերների» մուտքը: Մասնավորապես, դեռևս Ռ. Միլսն էր հաշվարկել, որ 50-ական թթ. ամերիկյան կորպորացիաների կառավարիչների միայն 8%-էին «բնակչության առավել ստորին շերտերից» ներգաղթածները: Այն ժամանակից մինչև օրս դրությունը չի փոխվել: Ամերիկյան սոցիոլոգներ Ու. Ուորները և Ջ. Էրլեգենը փորձել են ապացուցել, որ ամերիկյան էլիտան փակ չէ, որ այն մշտապես լրացվում է «ստորին շերտերի» առավել «շարժուն»

---

[12] *Տե՛ս* **Ашин Г. К.,** *նշվ. աշխ., էջ 8:*

[13] **Паретто В.,** *նշվ. աշխ., էջ 59:*

[14] *Նույն տեղում, էջ 63-64:*

մարդկանց հաշվին՝ իբրև «թագավորական ուղի» դեպի էլիտա նշելով լավ կրթությունը: Սակայն այս դրույթը պսակվում է անհաջողությամբ, քանզի բավական է հիշատակել, թե որքան թանկ է կրթությունը կապիտալիստական երկրներում: Բայց կրթությունն ինքնին անձին դեռևս չի մտցնում էլիտա. անհրաժեշտ են կապեր, հովանավորչություն, հակառակ դեպքում մարդը կմնա «միջին օղակի» մակարդակում, որտեղ նա իրական էլիտայի լոկ հրամաններ կատարողն է:

Պահպանողական կողմնորոշման էլիտարիստները նշում են, թե, իբր, հարստությունը մարդու բացառիկ ընդունակությունների ապացույցն է և միաժամանակ՝ պարգևը դրանց համար: Միայն նման մարդկանց կարելի է վստահել հասարակության կառավարումը: Մինչդեռ աղքատներն աղքատ են, քանզի չունեն ընդունակություններ, կյանքի պայմաններն էլ չեն նպաստում նրանց զարգացմանը: Պահպանողական կողմնորոշման էլիտարիստները ժամանակին նույնը պնդում էին «բնածին ստրուկների» մասին և գրում, թե, իբր, ստրուկ լինելն անգամ օգտակար է նրանց համար: Քավ լիցի. մի՞թե խարդախությամբ փող դիզած անձը կամ նրա փողերը ժառանգած երջանիկ ապուշն ավելի լավ է հասկանում, թե ինչ է պետք ժողովրդի բարեկեցությունն ապահովելու համար: Առաջինն ամենաշատը կարող է պարծենալ իր բացառիկ ընդունակություններով՝ խաբել մարդկանց, իսկ երկրորդը՝ որ ունի նման հայր:

3. Քանզի հասարակությունն անհնար է առանց էլիտայի. յուրաքանչյուր հասարակություն շերտավորված է, և նրանում կան արտոնյալներ, ուստի ցանկացած հեղափոխություն անիմաստ է և անհեռանկար, որովհետև դրա հետևանքով մի էլիտային փոխարինելու է գալիս մեկ ուրիշը, իսկ զանգվածները, որոնց այդ նոր էլիտան օգտագործել է որպես հեղափոխական վերափոխումների գործիք, առաջվա նման մնում են ստրկացված և շահագործված: Ինչպես պատկերավոր գրում է Ռ. Միխելսը, «գայթակղություն է առաջանում իրավիճակն անվանելու ողբերգակատակերգություն: Զանգվածները բավարարվում են նրանով, որ, չխնայելով իրենց ուժերը, փոխում են իրենց տերերին»[15]:

4. Քանզի հասարակության գոյությունը սկզբունքորեն անհնար է առանց շահագործման, առանց սոցիալական անհավասարության, ուստի իրական սոցիալիզմը բոլորովին էլ սոցիալիզմ չէ, այլ լոկ «իր էլիտայի կազմն ու կառուցվածքը փոխած» հասարակություն է:

Գերմանացի տեսաբան Ռ. Միխելսը գրում էր, որ Վիլֆրեդո Պարետոն «... առաջարկեց սոցիալիզմը դիտարկել որպես հատկապես հարմար միջոց աշխատավոր դասի շրջանից նոր էլիտա արտադրելու համար՝ նկատելով ներքին ուժի հայտանիշ երիտասարդ «քաղաքական դասի» առաջնորդների ունակությունում՝ հակադրվելու հետապնդումներին և անարգանքներին և

[15] Տե՛ս **Михельс Р.** *Социология политической партии (Антология политической мысли в 5-ти томах, т. 2, М., 1997, с. 190).*

դրանցից դուրս գալու հաղթանակով»[16], ապա եզրակացնում. «Կարող են հաղթել սոցիալիստները, բայց ոչ սոցիալիզմը, որը զոհվում է իր կողմնակիցների հաղթանակի պահին .... աշխատավորներին լոկ պատիվ է ընկնում լինել կառավարության ձևավորման մասնակիցը: Բավական համեստ արդյունք, եթե նկատի ունենանք հոգեբանական ֆենոմենը, երբ երբևիցե ամենաուղղամիտ եղած իդեալիստն առաջնորդի դիրքում գտնվելու կարճ շրջանում իր մեջ մշակում է առաջնորդության համար բնորոշ որակներ»[17]:

Ելնելով վերոշարադրյալից՝ թվում է, թե էլիտաների տեսությունը կտրուկ հակադրվում է ժողովրդավարության սկզբունքներին: Իրոք, սկզբնական շրջանում այդպես էր: Քննադատելով ժողովրդավարությունը՝ էլիտարիստներն ապացուցում էին, որ, մի կողմից, այն ընդամենը առասպել է, մյուս կողմից՝ այդ տեսական պատրանքը ծնում է, Մոսկայի արտահայտությամբ, «քաղաքական կազմակերպության վատագույն տիպը՝ նրանց անանուն բռնակալությունը, ովքեր հաղթել են ընտրություններում և խոսում են ժողովրդի անունից»[18]: «Հանրապետությունը,- գրում է Միխելսը,- որում մենք տեսնում ենք, այդուհանդերձ, բուրժուական ժողովրդավարության բարձրագույն ձևը, առանձնանում է, ըստ Պրոդոնի, կառավարման ամենամանրախնդիր, մոլեռանդ ոգով: Այդ կառավարությունը ելնում է նրանից, որ կարող է ամեն ինչ իրականացնել անպատիժ՝ միակ պատճառով ... բռնակալությունը միշտ կարելի է արդարացնել հանուն հանրապետության և ընդհանուր շահի գործելու անհրաժեշտությամբ»[19]: Հատկապես դեմոկրատիայի սուր քննադատությամբ է հանդես գալիս իսպանացի փիլիսոփա, սոցիոլոգ և մշակութաբան Խոսե Օրտեգա-ի-Գասսետը: «Զանգվածները գրավում են փոքրամասնության տեղը,- գրում է նա,- այսօր մենք ներկա ենք սուպերդեմոկրատիայի հաղթանակին, երբ զանգվածները գործում են անմիջականորեն, օրենքից անկախ՝ ողջ հասարակությանը պարտադրելով իրենց կամքը և ճաշակները՝ նյութական ճնշման օգնությամբ: Իրենց էլիտա երևակայող զանգվածները բերում են ավերում»[20]:

Սակայն, սկսած 30-ական թթ., մի շարք էլիտարիստներ փորձեցին էլիտան համատեղել բուրժուադեմոկրատական ինստիտուտների արժեքի ճանաչման հետ: Ինքը՝ Մոսկան, կյանքի վերջին սկսեց վերանայել իր հայացքները բուրժուական ժողովրդավարության վերաբերյալ՝ նրա որոշ սկզբունքներն ընդունելու առումով: Նա գալիս է իր համար «պարադոքսալ» եզրակացության՝ ժողովրդավարական մեթոդները կարող են օգտագործվել

---

[16] Նույն տեղում, էջ 186:

[17] Նույն տեղում, էջ 190:

[18] **Mosca G.** *Elementi di scienza politica, Bari, 1953, p. 157.*

[19] **Михельс Р.,** *նշվ. աշխ., էջ 187:*

[20] **Ortega y Gasset J.** *The Revolt of the Masses, N. Y., p. 13-23, p. 119.*

կառավարող դասի ուժի և կայունության մեծացման համար, որ դեմոկրատիաներում «կառավարող դասի շարքերն ավելի բաց են»[21]: Դրա հետևանքով ստեղծվում են ամեն տեսակի պալիատիվ (կիսամիջոցային) հայեցակարգեր, ինչպես «պոլիարխիական դեմոկրատիան» (Ռ. Դալ), «դեմոկրատական էլիտարիզմը» (Պ. Բահրահ):

Պարետո-Մոսկայի հայեցակարգը «ժամանակից դեմոկրատական տեսության» հետ միավորելու համար, նշում է Բահրահը, պահանջվեց դրա արմատական վերանայում, որն իրականացվեց Ջոզեֆ Շումպետերի և Կ. Մանհեիմի կողմից 1930-1940 թթ.: Շումպետերը «նեղացնում» է «դեմոկրատիա» հասկացությունը՝ առաջարկելով այն չնույնացնել ժողովրդական իշխանության հետ: Դեմոկրատիայի՝ որպես «ժողովրդի կառավարման» մեկնաբանության փոխարեն նա առաջարկում է, իր կարծիքով, «ավելի ռեալիստականը»՝ «կառավարություն՝ հավանության արժանացած ժողովրդի կողմից» (դա ժողովրդի կառավարումը չէ, այլ «դեմոկրատական էլիտայի» կառավարումը, որը կառավարում է «ի շահ ողջ հասարակության»)[22]: Ժողովրդավարական էլիտարիզմի ներկայացուցիչները ցույց են տալիս, որ դեմոկրատիան առանձնանում է հենց էլիտաների բազմաքանակությամբ, որոնք մրցակցում են միմյանց միջև՝ ընտրողների ձայների համար պայքարում, ինչը ենթադրում է, որ զանգվածները որոշակի չափով կարող են ազդել քաղաքականության վրա՝ ընտրություն կատարելով մրցակցող էլիտաների միջև: Շումպետերն էլ հենց դեմոկրատիան որակում է իբրև «ինստիտուտ՝ քաղաքական որոշումների հասնելու համար, երբ իշխանական դիրքերին գալիս են մարդկանց ձայների համար մրցակցային պայքարի միջոցով»[23]:

Ժողովրդավարության այդ «շուկայական» հայեցակարգում տարբեր էլիտաներ «վաճառքի են հանում իրենց ծրագրերը, իսկ գնորդների զանգվածները դրանք ընդունում կամ մերժում են ընտրություններում: Նման կերպով խթանվում են էլիտաների մրցակցությունը և գործունեությունը՝ ի շահ ողջ հասարակության, ի նպաստ ազատության և առաջընթացի:

Իրավացիորեն քննադատելով այսպիսի դիրքորոշումը՝ Սարտորին գրում է. «Մեզ մոտ իրականացնելով դեմոկրատիա, որը սահմանվում է որպես ընտրովի (elective) պոլիարխիա՝ մենք դրանով իսկ չենք անդրադառնում համակարգի «լավ» գործառման կազմակերպմանը, քանզի մրցակցությունն ընտրություններում չի ապահովում արդյունքների որակը, այլ՝ լոկ դրանց հասնելու միջոցների ժողովրդրդավարությունը: Մինչդեռ մնացածը՝ այն, թե որքանով է արժեքավոր վերջնական արդյունքը, կախված է ղեկավարության որակից (ոչ միայն գթասրտությունից)»[24]: Ուստի և նա առաջարկում է ժողովրդավարության երկու կարճ սահմանումներ. «Ժողովրդավարությունը պիտի լինի (ա) ընտրովի պոլիարխիա և (բ) պոլիարխիա՝ ըստ արժանիքների

---

[21] **Bachrach R.** *The Theory of Democratic Elitism, A Critique Little, Brown and C, 1964, p. 15.*

[22] **Schumpater J.** *Capitalism, Socialism and Democracy, London, N . Y., 1950, p. 246, 291.*

[23] *Նույն տեղում, էջ 128:*

[24] **Сартори Д. Ж.,** *նշվ. աշխ., էջ 726-729:*

(վաստակի)»: Դրա համար նա «իշխանության հավասարության» փոխարեն, որը հասկացվում է որպես հորիզոնական հավասարություն (դեմոսի հավասար իշխանություն), առաջ է քաշում ժողովրդավարության ուղղահայաց գործընթացները և տեխնոլոգիան որակապես և վճռականորեն սահմանող «հավասարությունը՝ ըստ արժանիքների», այսինքն՝ արիստոտելյան համաչափ հավասարությունը: Փաստորեն, նեոէլիտարիստները պնդում են, որ էլիտաների պլյուրալիզմը, հավասարակշռությունը, մրցակցությունը և փոխզսպումը դեմոկրատիայի միակ հնարավոր տեսակներն են: Ժողովրդավարության այլ տարբերակների իրացման փորձերը (նախ և առաջ նկատի են ունենում սոցիալիստական կառուցման փորձը) չկայացան, քանզի տանում են բռնատիրության: Ուստի դեմոկրատիայի գլխավոր սպառնալիքը պետք է տեսնել աշխատավորների հեղափոխական-ժողովրդավարական շարժման, հետևողական ժողովրդավարության, սոցիալիզմի՝ նրանց ձգտման մեջ: Այստեղից՝ նեոէլիտարիզմի պարադոքսալ եզրակացությունը. դեմոկրա-տիան վտանգավոր է դառնում...հենց դեմոկրատիայի համար: «Մենք,- հայտարարում է Սարտորին,- պիտի վախենանք, որ դեմոկրատիան, ինչպես Սատուրնի մասին առասպելում, կուլ կտա սեփական առաջնորդներին»[25]: Եվ այսպես, ժողովուրդ, որն անկարող է ապահովել ժողովրդավարություն, և ժողովրդից «վախեցող» դեմոկրատիա: Դրանում են Դայն ու Յեյգլերը տեսնում ժամանակակից դեմոկրատիայի ծաղրը: «Դեմոկրատիան,- գրում են նրանք,- ժողովրդի իշխանությունն է, բայց դեմոկրատիայի գոյապահպանության համար պատասխանատվությունն ընկած է էլիտաների ուսերին: Դա դե-մոկրատիայի ծաղրն է. էլիտաները պիտի իմաստուն կառավարեն, որպեսզի ժողովրդի իշխանությունը կենդանի մնա: Եթե ամերիկյան քաղաքական համակարգի կենսունակությունը կախված լիներ քաղաքացիների ակտիվությունից, տեղեկացվածությունից ու կրթվածությունից, ապա Ամերիկայում ժողովրդավարությունը վերացած կլիներ արդեն վաղուց, քանզի զանգվածներն Ամերիկայում անտարբեր են և ապակողմնորոշված՝ քաղաքական առումով և զարմանալիորեն քիչ են նվիրված դեմոկրատական արժեքներին ... Բայց, բարեբախտաբար, այդ արժեքների և ամերիկյան դեմոկրատիայի համար ամերիկյան զանգվածները լոկ հետևում են առաջնորդներին՝ պատասխանելով էլիտաների առաջարկներին»[26]:

Այսպիսով, բոլոր հույսերն անհրաժեշտ է կապել «լավ», «որակյալ» էլիտայի հետ: Ավելին, Բրայսը գտնում է, որ «ըստ երևույթին, կառավարման ոչ մի ձև այդքան կարիք չունի մեծ առաջնորդների, որքան դեմոկրատիան»[27]:

---

[25] *История политических и правовых учений, учебник под ред. В. С. Нерсе- сянца, М., 1988, с. 737.*

[26] **Dye T., Zeigler H.** *The Irony of Democracy, An Uncommon Introduction to American Politics, Belmont, 1981, p. 2.*

[27] *Տե՛ս The American Commonwealth, 1888.*

Քննադատելով էլիտարիստներին այն բանի համար, որ նրանք զանգվածների իռացիոնալիզմի, սրանց կողմից առասպելները իբրև ճշմարտություն ընդունելու, հասարակության կառավարմանը նրանց անպատրաստվածության մասին դատողություններ անելիս հղում են կատարում զանգվածների վարքագծին՝ իբրև կառավարող բնազդների, զանգվածային հոգեբանության անհավասարակշռության վրա: Քաղաքագետ Աշինը պնդում է, որ նման իրավիճակը ոչ թե ի բնե է, այլ արդյունք է մտավոր և ֆիզիկական աշխատանքի բաժանման հազարամյա ավանդույթների, բաժանում, որը «ծնել է այնպիսի տգեղ երևույթներ, ինչպիսիք են մտավոր աշխատանքի (ներառյալ պետության կառավարումը, գիտության, արվեստի զարգացումը) մենաշնորհումը գերիշխող դասակարգի ներկայացուցիչների խմբի կողմից և ստեղծագործական սկզբունքի ճնշումը ժողովրդական զանգվածների աշխատանքում»[28]:

Ուստի, «հենց կյանքի սոցիալական պայմաններն են զանգվածներին մատնում ոչ ստեղծագործական, ոչ մարդկային գոյության»[29]: Մինչդեռ, ինչպես «Գերմանական գաղափարախոսությունում» գրում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, կոմունիստական հասարակությունում պայմաններ են ստեղծվում հասարակության բոլոր անդամների տաղանդների, ընդունակությունների բազմակողմանի զարգացման համար, ընդ որում, առանց նրանց գամելու գործունեության մի տեսակին. «Կոմունիստական հասարակությունում չկան նկարիչներ, գոյություն ունեն լոկ մարդիկ, որոնք զբաղվում են նկարչությամբ՝ որպես իրենց գործունեության մի տեսակով»[30]: Այստեղից Աշինը եզրակացնում է, որ «կոմունիստական հասարակությունում չեն լինի մարդիկ, որոնք պրոֆեսիոնալ կառավարում են հասարակական կյանքը, կլինեն միայն մարդիկ, որոնք զբաղվում են կառավարմամբ՝ որպես իրենց գործունեության տեսակներից մեկով», քանզի… «մենք չենք գտնում, որ ապագայի մարդը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում մասնագետ կլինի, բայց կան գործառույթներ, որոնք անօտարելի են բազմակողմանի զարգացած անհատից. դա նախ և առաջ մասնակցությունն է սոցիալական կյանքի կառավարմանը»[31]:

Ամփոփելով նշենք, որ էլիտաների տեսության հետազոտողների կողմից թույլ տրվող տարածված սխալը հետևյալ հարցերը չսահմանազատելն է. ո՞րն է իրերի դրությունը, ինչպե՞ս կարող է լինել, և ինչպե՞ս ավելի լավ կլիներ: Ընդ որում, առաջին հարցի պատասխանը պետք է տրոհել երկու մասի. ո՞րն էր իրերի դրությունն անցյալում և այժմ (լավ, թե վատ, բայց չի կարելի չխոստովանել, որ առաջ այլ էր): Ե՛վ անցյալում, և՛ ներկայումս հասարակությունը համասեռ չէ: Եթե պարզեցված ներկայացնենք նրա կառուցվածքը, ապա կարող ենք առանձնացնել երկու խումբ՝ իշխող և իշխվող: Ըստ որում, առաջինը, միշտ ավելի ուժեղ է, գավթում է ողջ իշխանությունը և

---

[28] *Նույն տեղում, էջ 17-18:*

[29] *Նույն տեղում, էջ 91:*

[30] **Маркс К, Энгельс Ф.** *Соч., т. 3, М., 1934, с. 393.*

[31] **Ашин Г. К.,** *նշվ. աշխ, էջ 238-239:*

վայելում է այն առավելությունները, որոնք տալիս է իշխանությունը: Այսքանով էլ սահմանափակվում է անցյալի և ներկայի ընդհանրությունը, և հենց այս փաստն արձանագրելն է էլի-տարիստների վաստակը:

ТЕОРИЯ ЭЛИТ

МАНАСЯН М. Э.

Резюме

Элита – это неотъемлемая и важная часть любого социума. Она осуществляет функции управления социумом, а также выработки новых моделей (стереотипов) поведения, позволяющих социуму приспосабливаться к изменяющейся среде. Исходя из психологической тенденции большинства людей находиться под чьей-то властью, а также из того, что генетически люди обладают разным интеллектуальным уровнем, казалось бы даже в благоприятных условиях жизни участие социума в процессе социального управления невозможно. В демократических обществах требования общества к элите несколько иные: здесь существенную роль играет не только информированность элиты в широком смысле слова, но и е¸ преданность данному обществу, которое и контролирует в демократическом обществе деятельность самой элиты.

THEORY OF ELITES

M. MANASYAN

Abstract

Elite is an integral and important part of any society. It administers social environment, as well as the development of new models (stereotypes) behaviors that society adapts to the changing environment. Taking into consideration the psychological tendency of most people to be under someone else's authority, as well as the fact that since birth, people are endowed with unequal intellect, it would seem impossible to imagine participation of society in the process of social control. Unlike the other spheres of life, the requirements for the elites are a bit different in the democratic society. Here not only is the awareness of the elites significant, but also their devotion to the given society. In addition, the elites in the democratic society are controlled by the given society.